ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պող. 1
+374 12 88 88 88
info@liga.am
www.liga.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընկերության ապահովագրական ծառայությունների մատուցման շրջանակներում ներդրել է ISO 27001 միջազգային կառավարման ստանդարտին համապատասխան Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ (այսուհետ՝ ՏԱԿՀ), որի առանցքային նպատակներն են՝

- ապահովել տեղեկատվական համակարգերի հասանելիությունը և գործունեության շարունակականությունը
- ապահովել տեղեկատվական ակտիվների հասանելիությունը, ամբողջականությունն ու գաղտնիությունը
- ապահովել տեղեկատվական համակարգերի ու ակտիվների ֆիզիկական անվտանգությունը
- նվազեցնել ՏԱ պատահարները և կանխել տեղեկատվական ակտիվերի կորուստը:

Վերը նշված նպատակների իրագործման համար Ընկերության ղեկավարությունը հայտնում է իր հաստատակամությունը՝

- տրամադրելու անհրաժեշտ արդիական ռեսուրսները՝ ՏԱԿՀ մշակման, ներդրման, պահպանման և շարունակական բարելավման համար
- բացահայտելու և բավարարելու բոլոր շահառու կողմերի կարիքները՝ դրանց կարևորությունը տարածելով բոլոր աշխատակիցների և մատակարարների շրջանում
- սահմանելու և պարբերաբար վերանայելու բոլոր գործընթացների նպատակները և արդյունավետության առանցքային ցուցանիշները, որոնք բխում են Ընկերության ռազմավարությունից
- իրականացնելու օրենսդրական, պայմանագրային և այլ պահանջները, որոնք Ընկերությունը հանձն է առել
- ապահովելու, որ տեղեկատվական անվտանգության սկզբունքները ներառված լինեն Ընկերության ռազմավարության մեջ և լինեն բոլոր գործընթացների անբաժան մաս
- ներգրավելու բոլոր աշխատողներին ՏԱԿՀ արդյունավետության բարձրացման գործընթացում՝ մոտիվացնելով նրանց՝ ներկայացնելու բարելավման առաջարկներ:

ՏԱԿՀ քաղաքականությունը պարբերաբար վերանայվելու և հասանելի է լինելու Ընկերության բոլոր շահառու կողմերին և կիրառվելու է ապահովագրական ծառայությունների մատուցման շրջանակներում ներգրավված բոլոր շահառուների կողմից:

TÜV AUSTRIA CERTIFIED EN ISO 9001 Certificate No. 2019021311450 TÜV AUSTRIA CERT GMBH
TÜVRheinland CERTIFIED
ISO/IEC 27001:2013 Management System
www.tuv.com ID 9108645522